

Тифлисъ, Реакція „Мшакъ.“

Յայտարարութիւնների համար վճարում են
լրաքանչիւր բառից մի կօպէկ:

Варта

դերում պ. Աւարանցը արդարացի մեր ունեցած նոր վերայ կարծիքը: Նա հասկացել էր իւր դերը և կատարեց այնքան լաւ որ առաւել պահանջել անկարելի է: Միայն ավստոս որ պ. Աւարանցը երբեմն երբեմն, իրան համար անկատարի ձեռք աշխատում է նմանացնել իւր խաղը պ. Աւարանցին խաղին, որով և շատ անգամ փնտրում է իւր ինքնուրոյն խաղալու ձևին: Յանկանայով առաւել մեծ յաջողութիւն պ. Աւարանցին, մենք խորհուրդ կը տայինք նորան զգուշանալ այդ յիշեալ թերութիւնից և աշխատել բնոր վերայ հանդիմանալ իւր սեպհական դերասանական արժանաւորութիւններով, առանց նմանացնելու իւր խաղը ուրիշ խաղին:

Աւարանցի դերից յետոյ նշանաւոր դերերից մէկն է և Վերմանի դերը, որ խաղաց պ. Ա. Մանդրինսկայը:

Իւր կարծ թատրոնական գործունէութեան միջոցում պ. Ա. Մանդրինսկայը, վերանորոգելով բոլորովին ինքնուրոյն, մեր տաղանդաւոր երբեմն դերասան պ. Ա. Սուքոլնսկայի ամպլուան, ինչպէս Մարկիզի դերում, Վոն Սէպարի մէջ և ուրիշ պիեսներում, դա մի և նոյն ժամանակ ստեղծեց զորա հետ և առանձին մէկ ամպլուա, որի իրողութիւնը անհրաժեշտ կը մնայ հայկական թատրոնի խղճով բնոր համար, այն է՝ comique sérieux, որպիսի ամպլուան շատ հազուադէպ է ամէն բնոր համար:

Վերմանի դերում թէև նկատուում էր որ պ. Մանդրինսկայը չէր գտնում իրան իւր ամպլուան, այնու ամենայնիւ նա պահպանեց խաղի միութիւնը արժանաւոր և զովիւր ձեւով: Բայց մեզ թւում է որ պ. Մանդրինսկայը առաւել կենդանութիւն կը տար Վերմանի դերին, եթէ նա բնոր դուրս դալուց առաջ վճռէր իւր դերը աւելի ուսումնասիրելու և ապա վառահոգութեամբ կատարէր նորան:

Լուիզայի և պանդոպպիտի կնոջ դերերը առաջին ներկայացման ժամանակ կատարեց օրիորդ Սանդուխտը՝ իսկ երկրորդ անգամ օր. Շամիրամը: Օր. Սանդուխտը թէև աշխատում էր կենդանացնել իւր դերերը և պահպանեց խաղի միութիւնը, այնու ամենայնիւ մենք առաւել շատ էինք սպասում պատուելի դերասանուհու խաղից:

Մնացած դերերից, մնում է մեզ խօսել Վալենտինի և պանդոպպիտի (Տէր-Վալենտին) և Ունդուլի և Նիքէթի (Ունդուլի) դերերի մասին:

Պ. Տէր-Վալենտինը, գուշակուում ենք և չենք սխալուում, խոստանում է զարգանալ ապագայում: Վալ յայտնում է մեզ այն բնական արժանաւորութիւնները, որ ունէր հանգուցեալ պ. Մանդրինսկայը, որին մահը անչափ վաղ խլեց հայկական աղբաւտ բնից:

Միայն հարկաւոր ենք համարում զգուշացնել պ. Տէր-Վալենտինին, որ չը ստեղծուի իւր դերը (ինչպէս անում են մեր յարգեց դերասանները, սխա՞ծ պ. Չմշկանից) և աւելացնելով իւրանից զանազան անուղի խօսքեր, նա կարող է շնորհիւ իր ճանապարհից...

Մենք չենք ուզում հաւատաւ որ պ. Տէր-Վալենտինը, ընդունելով մեր անաշուտ կարծիքը, չը զգուշանայ մեր ցոյց տուած թեւրութիւններից:

Պ. Ունդուլին պ. Տէր-Վալենտինին նման կարծես թէ խոստանում է նմանապէս մեծ ապագայ, ամենաանշուրհակաւ և ամենազբաւառ յայտնաւորում ամպլուայի: Բնութիւնը պարզեւել է պ. Ունդուլին բոլոր միջոցները այդ դերի նշանակութեան համար: Նա կը տայ մեզ ապագայում լաւ հմուտ դերասան, եթէ կաշխատէ թէ գրականական և թէ բնական միջոցով մշակել իւր ընդունած ամպլուան:

ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՇՈՒՄԻՐՔԻՑ

Տուած են ներկայացումներ հայերեն լեզուով դերմանական կուբուս, բացի «Պէպո» կոմիդիայի հեղ. պ. Պ. Ստեղծութեանցի, յօդուտ պ. Ա. Մանդրինսկայի:

Կանանց կրթարան, կոմիդիա 5 արարուածով հեղ. Մօլիերի, թարգմ. պ. Պ. Չմշկանի, կիրակի 17 նոյեմբերի 1874 ամի, յօդուտ տ. Ստեղծութիւնի: Ծախուած են տոմսակներ 246 ա. 65 կ.

Գահլիճի և Բոնոնի վարձ .	65	ա.	կ.
Երաժշտութիւն և այլն .	93	,,	10
Չուտ գումար յօդուտ տ. Ստեղծութիւնի .	77	,,	35
Յետ ձգուած յօդուտ թատրոնական պիտոյքի .	11	,,	20
	246	,,	65

Վալենտին տրաքուիս պիտի պատկերէ պ. Փոլիսկանցի, 11 արարուած էլի մէկ դոն, հեղ. պ. Պ. Ստեղծութեանցի և Պառաւանդուտ խրատ հեղ. պ. Մ. Տէր-Վրիգորիանցի, 1 ղեկ տեմբերի 1874 ամի, յօդուտ օր. Ստեղծութիւնի: Ծախուած են տոմսակներ 219 ա. 25 կ.

Գահլիճի և Բոնոնի վարձ .	65	ա.	կ.
Երաժշտութիւն, պ. պ. դերասաններին և ծախս .	107	,,	4
Չուտ գումար յօդուտ օր. Ստեղծութիւնի .	38	,,	16
Յետ ձգուած յօդուտ թատրոնական պիտոյքի .	9	,,	5
	219	,,	25

Քանդած օջախ, կոմիդիա, հեղ. պ. Պ. Ստեղծութեանցի 15 ղեկ, 1874 ամի կիրակի, յօդուտ պ. Պ. Չմշկանի: Ծախուած են տոմսակներ 324 ա. 10 կ.

Գահլիճի և Բոնոնի վարձ .	70	ա.	կ.
Երաժշտ. պ. պ. դերասաններին և ծախս .	97	,,	5
Չուտ եկամուտ յօդուտ պ. Չմշկանի .	138	,,	1
Յետ ձգուած յօդուտ թատր. պիտոյքի .	19	,,	4
	324	,,	10

Հաղար թոմսանուց կարայ, 11 արարած թատրալայի, հեղ. պ. Պ. Ստեղծութեանցի և էս էլ քի մօղթութիւն, հեղ. պ. Մ. Տէր-Վրիգորիանցի 29 ղեկ, 1874 ամի կիրակի, յօդուտ բնոր կառավարիչ պ. Ն. Ա. Ծախուած են տոմսակներ 189 ա. 50 կ.

Գահլիճի և Բոնոնի վարձ .	65	ա.	կ.
Երաժշտ. և այլն .	80	,,	,,
Չուտ գումար յօդուտ պ. Ն. Ա. Ծախուած յօդուտ թատրոնական պիտոյքի .	40	,,	5
	4	,,	45
	189	,,	50

Թուղթ խաղացողի կեանք, թարգմ. պ. Մ. Պառաւանդուտ կիրակի 12 յուլիարի 1875 ամի, յօդուտ տ. Ստեղծութիւնի: Ծախուած են տոմսակներ 242 ա. 50 կ.

Գահլիճի և Բոնոնի վարձ .	65	ա.	կ.
Երաժշտութիւն և այլն .	116	,,	98
Չուտ եկամուտ .	50	,,	42
Յետ ձգուած յօդուտ թատրոնական պիտոյքի .	10	,,	10
	242	,,	50

Թուղթ խաղացողի կեանք, թարգմ. պ. Մ. Պառաւանդուտ: Ծախում 22 փետրվարի 1875 ամի, բարեգործական նպատակով, այսինքն յօդուտ թատրոնական պիտոյքի: Ծախուած են տոմսակներ 136 ա. 50 կ. և զոտարեւելութիւն 12 ա.

Գահլիճի և Բոնոնի վարձ .	65	ա.	կ.
Բնոր համար, աֆիշա, բէկվէլիտ և այլն .	40	,,	70
Չուտ եկամուտ .	42	,,	80
	148	,,	50

Արտագրեց Պ. Չմշկան

ՆԱԽԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս մարտի 6

Յարգելի պարոն. Ինձ յանձնված Թիֆլիսի դիմադրայի աշակերտները, զիտարարուէն հայտնաւորական դաւանութեան տեղեկացած լինելով ձեր պատուելի լրագրից այն տառապանքի, սովի մասին, որ հասած է իրանց համադրայիներին Փոքր-Ասիայում, կամենալով իրանց կողմից, որքան հնար էր նոցա, օգնութիւն հասցնել կարօտեալներին, հաւաքեցին այդ նպատակով իրանց մէջ, իմ թոյլտուութեամբ, և օթանաւով լուրջ, որ և այս նաւակի հետ միասին պատիւ ունիմ ուղարկել ձեզ, վերս յիշված նշանակութեամբ հասցնելու համար: Ինքունցէք և այլն:

Լ. Մարկոյ

ՆԱԽԱԿ ՀԱՄԱԳՐՈՒՑ

Մարտի 1-ին:

Մեր Հայ հասարակութիւնը չըպատմած լինելով թուրքերով և ընդունելով նոցա կենքի անապահանձ վարք ու բարքը, չէ թէ կարողանում է իր առաջադիմութեան ընթացքը օրըստօրէ յաջողեցնել, այլ նաև կորցնում է այն, ինչ որ առանձին է նորան նոյա սուրբ կրօնը, լեզուն և պատմութիւնը: Կը յիշն միայն այն երեսները թուրքի կենքից, որը յատուկ լինելով նորա խաւարատիւութեամբ, անմիջ զօնում է և հայ հասարակութեան շատ անհաւանդութիւն: Թուրքերը, համաձայն իւրեանց Պարսկին և Շարիաթին, 15—16 տարեկան աղայաց ամուսնացնում են 11—12 տարեկան աղջկանց: Եւս: Երիտասարդները ամուսնի և հարստեան կոչման ու հասկացողութեան ըստ հասակին անչափաւոր լինելով, չեն կարողանում իւրեանց տան մէջ ընտանեկան սիրոյ կապ պահպանել, ուստի նոցա ընտանեկան կենքը ինքն իրան բարդականութեամբ խախտված է լինում: Այդ վաղաճառ ամուսնութիւնները նոցա մատուցանաւ կանանց առողջութեան համար կործանիչ հետեանքներ ունեն և մի և նոյն ժամանակ պատճառ են լինում որ նոր սերունդը վատաւոր է լինում: Մեր Հայ հասարակութիւնն էլ քիչ բաւառութեամբ, դիմում է իւր հարեան ազգի օրինակին, այսինքն աշխատում է շուտ ամուսնանալով, թէև հայը 3 կամ 4 տարի հասակով մեծ է լինում թուրքից: Հայի շուտ ամուսնանալն էլ աղատ չէ լինում վերս յիշված պակասութիւններից, այն է՝ նախ ինքն ամուսնացած երիտասարդը իւր անչափաւոր համակցողութեամբ չկարողանալով տիրել իւրեան և իւր կնոջ վերա, ընտանքը չէ կարողանում լինել մի պատուելի, դիտարկելով ընդունելով մէջ սեր և խաղաղութիւն պահպանելու, թէ երիտասարդը բարդական ուղղութիւն տալու յատկութեանց, երկրորդ օրիքը առողջաւոր կազմ չեն լինում: Մօտ ժամանակում մի այդպիսի վաղամեծ երիտասարդի ամուսն կենքը մեզ վերա մեծ տալուտութիւն ունեցաւ և մենք ի ներկայիս ունենալով այդ հանգամանքները, պիտի ցանկանանք որ զոնն ու թէ շուտ զիտարարութեամբ 21 տարեկան երիտասարդը, լինի նա ամուսնացած թէ ոչ, պիտի թողնէ իւր կնոջը որդուն և ընտանքը և ցնայ զինուոր դառնայ, կըստիպէ հեռու լինել շուտ ամուսնաւորաց, որք վատ հետեանքը ակնյայտնի անհում ենք:

Ա. Մէլիք-Շահաբադեանց

ՆԱԽԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒՄՆԻՑ

Մարտի 1-ին

Արդէն ընտրվեցան թէ հին քաղաքագրութիւնը և թէ ջրպետը, կրկին վարելու անցեալ տարիներու կատարած պաշտօնը: Այժմ սպասում ենք որ մեր ընտրվածները ժողովրդի զէպի իրանց համակրութեան փութարէն, հասարակաց օգուտը անձնականից աւելի վեր պիտի դասեն:—Վիւղական ընտրութիւնը դեռ աւարտված չեն, թէև չորս ամիս է որ սկսվել են և շատ կարելի է որ դարձեալ ուշանան: Բայց արդեք նոր ընտրվածները մի նոր օգնութիւն կը բերեն զիւղական թշուառութեանց:—Բարեկենդանին այստեղ առաջին անգամ թատրոնական ներկայացումն եղաւ: Որքան համազանգեցնող ներում էին բաւական յաջողակ գնաց «Եղեանիկ» օղբերգութեան կատարելը: Տիւրք, բայց ճշմարիտ իրողութիւն է, որ եթէ օտարներից մի քանի առաջնակարգ անձինք ծանրագին տոմսակներ առնելով չը նպաստէին հայ-թատրոնական ներկայացմանը, թատրոնը իւր ծախքը չը պիտի վճարէր:—Դպրոցը ըն-

թանում է, որպէս և որքան ոյժ է ստանում հասարակութիւնից, իսկ հասարակութիւնը ինչ օգնութիւն է տալիս: Հոգաբարձութիւնը, հայկա ունենալիս առաջ հաստատված, այժմ հրաժարականներ է տալիս:—Վիւղական դպրոցների թիւը այս վիճակում օր ըստ օրէ նուազվում են: Հինգ տարի առաջ եղած տանապալի դպրոցներից հետզհետէ փակվելով մինը միւսից յետոյ, այժմ երեքն էլ չը մնաց: Սրա համար զու մեղադրեմք: Եւ դեռ թի՛ղ կարծենք, որ հայերը լուսաւորվում են:

ՆԱԽԱԿ ԴԻԼԻՋԱՆԻՑ

Փետրվարի 28-ին

Աւելորդ չը համարեցի տալ տեղեկութիւն որ 1863 թ. ին Դիլիջանի հայ դիւղայից հասարակութեամբ կազմվելու իւրեանց մէջ վճիռ, ուսումնարան յինկու Դիլիջանի դիւղում: Որքան առեւտրական կային թէ համադրական և թէ օտար դիւղայից կամ քաղաքացիք, պէտք է իւրաքանչիւր իրանում թաղել տարեկան տանական ուսուրի տար հիմնով ուսումնարանի համար: Առեւտրականց մասը առանց ընդդիմանալու յօժարվելով վճարել տարեկան տանական ուսուրի յօդուտ նոր ծնող ուսումնարանի: Հասարակութեան այս գործունէութիւնը յիշեալ թիւից սկսուեց չարունակ դիւղ մինչև տասը տարի, և այժմ էլ զնաւէ, ուսումնարանի անուամբ կազմված օգուտը տասը տարով միջոցաւ տանում էին հասարակութեան: Զբաւեց անդամներից մի քանիսը: Արդեք պէտք է ասուի թէ ժողոված օգուտը մատանի մէջ գրվում էր կամ յիշեալ անդամներից հայի պահանջով էր: Բոլորովին ոչ: Անդամներն կային անգրագէտներ, և գրագէտներն էլ օգուտ չէր հայել անուամբ գրելն, այլ իւրեանց կամեցողութեամբ բերանացի յայտնում էին թէ այդպէս հայի կապ մեզ մօտ: Վերջապէս յիշեալ տասը տարվան ժողոված արդիւնքը մի գումար կազմելուց յետոյ, հասարակութիւնը վճեց ուսումնարան չինել տալ: Որովհետև առանց հարցնելու և վեր առնելու դիտացող մարդուց չափ ու ձևը, պատերը կանգնեցրին շատ խոնարհ, սակայն հարկաւոր դռներ և լուսամուտների անկարգ և գեղեցիկ համաւոր լինել, և միակ չոր պատերն էլ առանց հարկի լինելով, ահա չինում լինում մերձեցնում է կրթանականը: 1872 թ. ին դերասանութիւն Պօղոս վարդապետը հասարակութեան կամաւ սկսեց կարգադրութիւն անել ընտրելով առեւտրականներից երկու հոգաբարձու որ արդեանց եկամուտը չարունակ տանալով, գործ դին տոկոսները: Անցեալ տարի հասարակութիւնը հայի պահանջեց հոգաբարձուներից: Հայիւր կրկին յանձնուեցաւ հոգաբարձուներին: Մի քանի բարեհոգի մարդիկ ընդդէմ լինելով հոգաբարձուներին, սկսեցին հակառակ բանիլ խօսալ ընդդէմ սոցա: Հոգաբարձուք զգվելով, անցեալ նոր տարուս առաջարկեցին հասարակութեանը իւրեանց հրաժարականը: Իսկ հայիւր այժմ դեռ գտնվում է հոգաբարձուների մօտ:

Փ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լուսմ ենք, որ եկող տարվայ համար Թիֆլիսը դարձեալ կունենայ իտալական օպերա: Օպերայի ձևաւորութեան յանձն առնողները երկու իտալացի են: պ. պ. Տուրուս և Սիլիո: Արդեք կը լինի և ուսում թատրոն, չը գիտենք:

Ներկայ համարում տպւում ենք Թիֆլիսի կառավարական գիմնազիայի դիրիկտոր պ. Մարկ օ Վիլիամսի, որով նա մեզ հասցնում է 70 բուր, որ դրամը հաւաքել են գիմնազիայի գլխաւորապէս հայ աշակերտներից Փոքր Ասիայի տոկատանց հայերին հասցնելու համար: Երարակալութեամբ ընդունելով այս գումարը, կը հասցնենք նրան, որքան հնարաւոր է շուտ կ. Պօլիս, իւր նշանակութեան անդը:

Շոգենաւորի, վաճառականութեան և Օղէսայի երկաթուղու Ռուս ընկերութիւնը յայտնել է «Важнаго» լրագրում, որ այն չորեքշաբթի արդեք է Օղէսայից փետրվարի 27-ին դուրս եկած լինէր, չը կարողացաւ դուրս գնալ, որովհետև Օղէսայի նաւահանգիստը սառած է: Հետեան չորեքշաբթի պէտք է դուրս գայ մարտի 6-ին, եթէ նաւահանգիստը կրկին աղատ կը լինի:

Շաւմախուց գրում են մեր լրագրին, որ փետրվարի 22-ին հայ երիտասարդներին մի ընկ-

